

**Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն**

---

**Հայաստանի Հանրապետության 2003 թվականի  
պետական բյուջեն**

**ՀԱՍԱՌՈՒԹԵՑ ՈՒՂԵՑ ՅՈՒՆԻՑ**

## **Բովանդակություն**

|  |           |
|--|-----------|
| <b>Երկտող ընթերցողին</b> .....   | <b>3</b>  |
| <b>1. Ի՞նչ է բյուջեն</b> .....   | <b>4</b>  |
| <b>2. Հայաստանի Հանրապետության սոցիալ –տնտեսական<br/>իրավիճակը բնութագրող հիմնական մակրո -<br/>տնտեսական ցուցանիշների կանխատեսումները 2003<br/>թվականի համար</b> ..... | <b>5</b>  |
| <b>3. Որտեղից են գոյանում բյուջետային մուտքերը և ու՞ր են<br/>դրանք ուղղվում</b> .....  | <b>11</b> |
| Եկամուտներ   | 13        |
| Ծախսեր   | 15        |
| <b>4. Բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը</b> .....  | <b>20</b> |
| <b>5. Ի՞նչ է բյուջետային գործընթացը</b> .....  | <b>23</b> |
| ՀՀ պետական բյուջեի նախագիծը  | 23        |
| Պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը  |           |
| Ազգային ժողովի կողմից  | 25        |
| Բյուջեի կատարման վերահսկումը   | 26        |
| <b>Մասնագիտական տերմիններ</b> .....  | <b>27</b> |

# Երկտող ընթերցողին

Ընթացիկ տարում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կծախսվի 385.2 մլրդ դրամ բյուջետային միջոց: Ամեն մի քաղաքացու հաշվով այն կկազմի մոտ 128000 դրամ: Այդ գումարի հիմնական մասը գոյանում է Հայաստանի քաղաքացիների և ձեռնարկությունների կողմից համապատասխան բյուջեներ մուծվող հարկերից և այլ պարտադիր վճարումներից:

Բյուջեներում կուտակված գումարները ծախսվում են տարբեր նպատակների համար, օրինակ, մեծ ծրագրերի՝ ինչպիսին է միջնակարգ կրթության տրամադրումը, նաև փոքր և համեմատաբար քիչ հայտնի գործարքների՝ ինչպիսին է ավտոմեքենաների համար պետական համարանիշերի սալիկների գնումը:

Պետական և տեղական բյուջեների, ինչպես նաև սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի հանրագումարը կազմում է Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն:

Ինչքանո՞վ եք Դուք տեղյակ ՀՀ համախմբված բյուջեի մեջ ընդգրկված բյուջեներից և մասնավորապես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից: Եթե Զեր պատասխանն է “ոչ շատ”, ապա Դուք միայնակ չեք:

Մենք գիտենք, որ Դուք մտահոգված եք նրանով, թե ինչպես են ծախսվում բյուջետային ռեսուրսները: Այդ պատճառով է պատրաստվել տվյալ ուղեցույցը: Հուսով ենք, որ տվյալ փաստաթուղթը ավելի հասանելի և հասկանալի կղարձնի բյուջեն ամենին, ով կընթերցի այն:

Այս ուղեցույցը հնարավորություն կտա Զեզ կատարել կարծ ուղեաստույտ Հայաստանի Հանրապետության 2003 թ. պետական բյուջեի էջերով: Այս էջերում մենք կներկայացնենք, թե ինչքան ռեսուրսներ է հավաքագրում և ծախսում Հայաստանի կառավարությունը, ինչ գումարներ է Հայաստանի Հանրապետությունը պարտը այլ երկրներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես և ում կողմից է կազմվում, հաստատվում և կատարվում բյուջեն:

Այս էջերին ծանոթանալուց հետո հուսով ենք իզուր չեք համարի ժամանակը և ուշադրությունը, որ նվիրեցիք այս ուղեցույցին և ավելի լավ պատկերացում կունենաք, թե ինչ է իրենից ներկայացնում պետության բյուջեն:

## 1. Ի՞նչ է բյուջեն

Բյուջեն բառը գոյացել է միջնադարյան անգլերենի “budget” բառից, որով անվանվում էր այն քսակը, ուր թագավորը պահում էր հանրային ծախսերի համար նախատեսվող փողերը:

Բյուջեն որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ է:

Բյուջեում արտացոլվում է.

թե ինչպես են պետական կառավարման (կենտրոնական) և տեղական ինքնակառավարման մարմինները հայթայթում իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները: Որքան գումար է հավաքագրվելու տարբեր տեսակի հարկերից, օրինակ, ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), շահութահարկից, եկամտահարկից, ակցիզային հարկից և եկամուտի այլ աղբյուրներից:

թե ինչպես (պետական) կենտրոնական և տեղական կառավարման մարմինները պետք է ծախսեն հավաքագրված գումարները: Որ ոլորտները պետք է ֆինանսավորվեն: Ինչքան գումար պետք է հատկացվի պաշտպանության, միջավայրի պահպանության, սոցիալական ծառայությունների, կրթության և այլ ծրագրերին:

պետության կողմից փոխառու միջոցների ներգրավման և պետական պարտքի մարման քաղաքականությունը: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա կառավարությունը ստիպված է պարտք վերցնել՝ քաղաքացիներին մատուցած ծառայությունների համար վճարելու և պետական պարտքը սպասարկելու համար:

### Պետական բյուջեն


ազդում է պետության տնտեսության վրա: Որոշ տեսակի ծախսեր, օրինակ, ծախսերը կրթության, գիտության և նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման գծով հավանորեն կբարձրացնեն արտադրողականությունը տնտեսության առանձին ճյուղերում, ինչպես նաև քաղաքացիների եկամուտները ապագայում: Հարկերը, մյուս կողմից, նվազեցնում են քաղաքացիների եկամուտները և ավելի քիչ գումար թողնում իրենց ծախսերի համար:

զգալիորեն փոխվում է՝ կախված երկրի տնտեսության վիճակից: Տնտեսական աճի պայմաններում ավելի շատ մարդ է ապահովված աշխատանքով և եկամուտներն էլ բարձր են: Կառավարությունը կարող է ֆինանսավորել ավելի շատ թվով ծրագրեր և լրացնիչ ֆինանսավորման ռեսուրսների փոխառության անհրաժեշտությունը կնվազի:

պատմական գրանցումների և պետական քաղաքականության ապագա ռազմավարությանը առնչվող փաստաթուղթ է: Պետական բյուջեն պարունակում է տեղեկություններ այն մասին, թե ինչպես է կառավարությունը հավաքագրել և ծախսել ռեսուրսները նախորդ ֆինանսական տարիների ընթացքում և ինչպես է այն առաջարկում հավաքագրել և ծախսել ապագայում:

Դիագրամ 1-1 –ից երևում է, որ 2003 թվականին ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը կկազմեն ազգային տնտեսությունում ստեղծվելիք համախառն ներքին արդյունքի(ՀՆԱ) մոտ մեկ քառորդը:

### Դիագրամ 1-1. ՀՀ համախմբված բյուջեի և նրա մեջ մտնող բյուջեների ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)



Ինչպես արդեն նշվեց, Երկրի համախմբված բյուջեն կազմված է պետական և համայնքների բյուջեներից, և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեից: Այս երեք բյուջեների ծախսերը միասին ընթացիկ տարում կկազմեն 385.2 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների), կամ ՀՆԱ-ի 26.1%-ը:

Այժմ դիտարկենք Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի որոշ մանրամասներ:

## 2. Հայաստանի Հանրապետության սոցիալ – տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական մակրո-տնտեսական ցուցանիշների կանխատեսումները 2003 թվականի համար


**Տնտեսական աճ:** Անցած ութ տարիները Հայաստանի համար բեկումնային եղան նոր տնտեսակարգի կերտման տեսանկյունից: 1994-2002 թթ. ընթացքում արձանագրվել է տնտեսական աճի բարձր տեմպեր (միջին տարեկան ցուցանիշը

այդ տարիների համար կազմել է 6.7%): Վերջինս անցումային տնտեսություն ունեցող երկրների համար բավականին բարձր ցուցանիշ է: Եթե 1993 թվականին 1989 թվականի հետ համեմատած Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի մակարդակները համապատասխանաբար կազմում էին 44.3% և 69.0%, այսինքն Հայաստանի Հանրապետությունում անկումը մոտ 25 տոկոսային կետով ավելի խորն էր, ապա 2001 թվականին այդ ցուցանիշները կազմեցին համապատասխանաբար 79.25% և 66.46%: 2002 թվականի արդյունքներով գրանցվել է 12.9% տնտեսական աճ, որից 7.7 տոկոսային կետով արդյունաբերությունում և շինարարությունում: Տարեկան տնտեսական աճը 2003 թվականի համար կանխատեսվում է 6.0%-ի սահմաններում:

**ՀՆԱ-ի փոփոխության դինամիկան Հայաստանի Հանրապետությունում և ԱՊՀ երկրներում բերված է 2-1 դիագրամում:**

### Դիագրամ 2-1

ԱՊՀ երկրներում և Հայաստանում իիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2005 թվականների ընթացքում




**Հարկային քաղաքականություն և վարչարարություն:** 1994 – 2002 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները հիմնականում ապահովվել են հինգ հարկատեսակների (ԱԱՀ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտահարկ և մաքսատուրք) և պետական տուրքի հաշվին: Եթե 1994 թվականին հարկային եկամուտները և պետական տուրքը կազմում էին ՀՆԱ-ի 11.2%-ը, ապա 2001 թվականին այդ ցուցանիշը կազմեց 14.36%, իսկ 2002 թվականի արդյունքներով՝ 14.63%: Հարկային օրենսդրության 1997 թվականի փոփոխությունները զգալիորեն փոխեցին անուղղակի հարկերի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային զամբյուղում: Եթե անուղղակի հարկերից մուտքերը 1994 թվականին կազմում էին հարկային եկամուտների և տուրքերի ընդհանուր գումարի 27.7%-ը, ապա 2001 թվականին դրանք կազմել են 71.3%:

Հարկային եկամուտների և տուրքերի նման կառուցվածքը կշարունակի պահպանվել նաև 2003 թվականին և անուղղակի հարկերը կունենան անհամեմատ ավելի մեծ կշիռ, քան մնացած հարկերը:

Դիագրամ 2-2 –ում ներկայացված է հարկերի և պետական տուրքի հավաքագրում/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան 1994 – 2003 թթ.:


**Դիագրամ 2-2. Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ (%)**



**Վճարային հաշվեկշիռ:** Ապրանքների արտահանումը 2001 թվականի ընթացքում կազմել է 353.1 մլն ԱՄՆ դոլար: 2002 թվականի համար արտահանումը ըստ նախնական տվյալների կազմել է 516.0 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել արտահանման ծավալների 46 %-ի աճ: Ներմուծման ծավալները 2001 և 2002 թվականներին կազմել են համապատասխանաբար 773.3 և 893.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2003 թվականին այն ծրագրավորվում է 948.0 մլն ԱՄՆ դոլարի չափով: Միաժամանակ վերջին տարիներին արծանագրվել է ներմուծման կառուցվածքի փոփոխություն՝ որոշ ապրանքատեսակների ներմուծման ծավալները կրճատվել են, պայմանավորված սպառման շուկայում տեղական արտադրության նմանատիպ ապրանքների (հատկապես սննդամթերքի) իրացման ծավալների ընդլայնմամբ:

Դիագրամ 2-3 –ում ներկայացված է արտաքին առևտորի և ընթացիկ հաշվի դինամիկան 1995-2003 թվականներին:

## Դիագրամ 2-3. Արտաքին առևտուի և ընթացիկ հաշվի դինամիկան 1995-2003 թվականներին



**Քբաղաձություն:** Չնայած Հայաստանի Հանրապետության տնտեսությունում վերջին տարիներին գրանցված դրական միտումներին և տեղաշարժերին, պետք է արձանագրել, որ զբաղվածության ոլորտում դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ: Միջնաժամկետ հատվածում կառավարությունը գերակայություն կտա զբաղվածության մակարդակի բարձրացմանը և պայմաններ կստեղծի աշխատուժի պահանջարկի աճը ապահովելու համար: Պետք է նշել, որ գործազրկության մակարդակի վերաբերյալ մեր երկրում գոյություն ունեցող պաշտոնական և ոչ պաշտոնական վիճակագրության գնահատականները զգալիորեն տարբերվում են մինյանցից: 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 10.4%, սակայն ըստ Ազգային Վիճակագրական Ծառայության (ԱՎԾ) կողմից անցկացված ընտրանքային հետազոտության նախնական տվյալների, որը հրականացվել է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության կողմից առաջադրվող գործազրկության ստանդարտ սահմաննանը համապատասխան, կազմել է 32.8%: Բացի այդ, տնտեսագիտական մամուլում շրջանառվում են որոշ անկախ փորձագիտական խմբերի գործազրկության մակարդակի գնահատականներ՝ 20%- սահմաններում: Ցանկացած դեպքում էլ փաստերը վկայում են, որ մեր երկրի հիմնական հարստություններից մեկը համարվող որակյալ աշխատուժը կորցնում է իր որակական և քանակական հատկանիշը: Արդյունքում, բազմաթիվ մակրոտնտեսական ցուցանիշներով անցումային երկրների շարքում առաջավոր դիրք գրավող մեր հանրապետությունուն ազգաբնակչության կեսից ավելին՝ 51.0%-ը շարունակում է մնալ աղքատ: Տնտեսությունում միջին աշխատավարձի մակարդակը՝ 2002 թվականի

դեկտեմբերին կազմել է 26444 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 10.2%-ով:

**Մակրոտնտեսական կանխատեսումներ:** << մակրոտնտեսական զարգացման ծրագրավորումը միջին ժամկետ հատվածում ընդգրկում է դրույթներ, որոնք ուղղված են հեռանկարային նպատակների՝ բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման, կայուն տնտեսական աճի ապահովման, եկամուտների արդարացի բաշխման իրականացմանը: << Կառավարության հիմնական նպատակը 2003 – 2005 թվականներին լինելու է տնտեսական գործընթացում նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը՝ ապահովելով նոր ստեղծվող եկամտի հնարավորինս բարձր մակարդակ և ստեղծված եկամուտը հասարակության ավելի լայն շերտերի միջև բաշխելու հնարավորություն: Տնտեսական ռազմավարության նոր գերակայության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը դեռևս համարվում է ցածր եկամտային երկիր՝ եկամուտների բներացման բարձր աստիճանով: Աշխատատեղերի ստեղծման գերակայությունը պայմանավորված է նաև միջին ժամկետ հատվածում աշխատուժի ճյուղային տեղաշարժով. մասնավորապես արտադրողականության աճին և արտադրության կենտրոնացմանը զուգընթաց տեղի կունենա աշխատուժի արտամուրում նախկինում ցածր արտադրողականության ոլորտներից, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, առևտուրը, որի արդյունքում աշխատուժի առաջարկը կավելանա և կիանգեցնի աշխատուժի շուկայում լարվածության աճին:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2-1-ում:

## Աղյուսակ 2-1.Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

|  | 2000<br>փաստացի | 2001<br>փաստացի | 2002<br>փաստացի<br>(նախնական) | 2003<br>կանխատեսում |
|--|-----------------|-----------------|-------------------------------|---------------------|
| <b>Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)</b>                         | 1031.3          | 1175.5          | 1357.3                        | 1473.3              |
| <b>ՀՆԱ-ի իրական աճ (%)</b>                               | 5.9             | 9.6             | 12.9                          | 6.0                 |
| <b>Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)</b>                     | 1911.6          | 2117.8          | 2367.9                        | 2512.4              |
| <b>ՀՆԱ-ի դեֆյատոր (%)</b>                                | -1.4            | 4.0             | 2.3                           | 2.4                 |
| <b>Սղած (միջին, %)</b>                                   | -0.8            | 3.1             | 1.1                           | 2.5                 |
| <b>Փոխարժեք (դրամ/ԱՄՆ դոլար, միջին)</b>                  | 539.5           | 555.1           | 573.2                         | 586.4               |
| <b>Բյուջեի եկամուտներ և գրանտներ<br/>(մլրդ դրամ)</b>     | 172.1           | 193.6           | 228.3                         | 287.0               |
| <b>Բյուջեի եկամուտներ և<br/>գրանտներ/ՀՆԱ(%)</b>          | 16.7            | 16.5            | 16.82                         | 19.48               |
| <b>Բյուջեի հարկային եկամուտներ և<br/>տուրքեր/ՀՆԱ (%)</b> | 14.8            | 14.4            | 14.63                         | 14.96               |
| <b>Բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ)</b>                    | 222.9           | 244.4           | 262.3                         | 334.2               |

|  | 2000<br>փաստացի | 2001<br>փաստացի | 2002<br>փաստացի<br>(նախնական) | 2003<br>Կանխատեսում |
|--|-----------------|-----------------|-------------------------------|---------------------|
| <b>Դրամ</b> )                                    |                 |                 |                               |                     |
| <b>Բյուջեի ընդամենը ծախսեր /ՀՆԱ (%)</b>          | 21.6            | 20.8            | 19.32                         | 22.68               |
| <b>Բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ (%)</b>                   | 4.9             | 4.3             | 2.5                           | 3.2                 |
| <b>Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ<br/>դոլար)</b>   | -463.5          | -420.2          | -377.6                        | -371.0              |
| <b>Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ<br/>դոլար)</b> | -773.4          | -773.3          | -893.6                        | -948.0              |
| <b>Ապրանքների ներմուծում/ՀՆԱ (%)</b>             | -40.5           | -36.6           | -38.1                         | -36.7               |
| <b>Ապրանքների արտահանում (մլն ԱՄՆ<br/>դոլար)</b> | 309.9           | 353.1           | 516.0                         | 577.0               |
| <b>Ապրանքների արտահանում/ՀՆԱ(%)</b>              | 16.2            | 16.7            | 22.0                          | 22.3                |

**Ծանոթություն**


1. 2003թ. Եկամուտների կազմում ներառված են Լինսի հիմնադրամի կողմից << կառավարությանը 2003թ. տրամադրվելիք դրամաշնորհի միջոցները:
2. 2003թ. ծախսերի կազմում ներառված են Լինսի հիմնադրամի կողմից << կառավարությանը 2003թ. տրամադրվելիք դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվելիք ծախսային ծրագրերը:

### 3. Որտեղի՞ց են գոյանում բյուջետային մուտքերը և ու՞ր են դրանք ուղղվում

Սովորական հայ ընտանիքում ծնողները հաճախ են սեղանի շուրջ քննարկում ընտանիքի բյուջեն: Նրանք կարող են քննարկել, թե որքան է վաստակում ընտանիքը, որքան կարող են նրանք ծախսել սննդի, կոմունալ ծառայությունների, տրանսպորտի, հնարավոր և արձակուրդային ուղևորությունների, և որքան կարող են խնայել ապագա ծախսերի համար:

Եթե ընտանիքի եկամուտները չեն բավարարում նախատեսված ծախսերը կատարելու համար, նրանք կարող են քննարկել, թե ինչպես կրծատել ծախսերը, օրինակ հագուստի ծեռք բերման, ճանապարհորդության և այլ բնագավառներում: Նրանք կարող են քննարկել մի այլ տարբերակ՝ ինչպես ավելի շատ վաստակել, աշխատելով հավելյալ ժամեր, կամ անցնելով մի նոր աշխատանքի: Եթե նրանց կարծիքով դրամի պակասը ժամանակավոր է, նրանք կարող են պարտք վերցնել, բայց միաժամանակ պետք է մտածեն, թե ինչպես են վերադարձնելու պարտքը:

#### Նկար 3-1. Ընտանիքի բյուջեն



Աղբյուր՝ սեփական եկամուտներ և փոխառված միջոցներ

Մյուս կողմից, եթե ընտանիքի եկամուտները գերազանցում են սովորական ամենօրյա պահանջները, կարելի է բարելավել բնակարանային վիճակը, գնել մեքենա և այլն:

Որոշ ինաստով կառավարությունը պահանջորում է իր բյուջեն այնպես, ինչպես այն արվում է ընտանիքում: Կառավարությունը և Ազգային ժողովը համատեղ որոշում են, թե ինչքան եկամուտներ կարող է ակնկալի կառավարությունը, որտեղից այն կգոյանա, ինչքան կարելի է ծախսել տարբեր ծրագրերի վրա, ինչպիսիք են օրինակ՝ պաշտպանությունը, արտաքին գործերը, սոցիալական ապահովությունը, կրթությունը, տրանսպորտը և այլն: Սակայն, ի տարբերություն կառավարությանը, ընտանիքում միշտ չէ, որ հնարավոր է պարտքով փող վերցնել, եթե հավելյալ ծախսերի կարիք կա:

Հետևյալ բաժնում մենք կքննարկենք այս խնդիրները ավելի մանրամասնորեն, այն է՝ ինչպես է կառավարությունը ստեղծում իր ռեսուրսները, և ինչպես է այն ծախսում:

### **Նկար 3-2. ՀՀ պետական բյուջեի ծախսերի ուղղությունները**



?

?

?

?

?



**Կառավարություն**

**Ազգային ժողով**

**Աղբյուրը՝ սեփական բյուջետային եկամուտներ և փոխառություն**

“Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի մասին” ՀՀ օրենքով պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերները

2003 թվականի համար հաստատված են 287 մլրդ դրամի, ծախսերը 334.2 մլրդ դրամի, իսկ դեֆլուց 47.2 մլրդ դրամի չափով: Պետք է նշել, որ համեմատած 2002 թվականի տվյալների հետ բյուջեի դեֆլուց կազի 15.2%-ով, դեֆլուց/ՀՆԱ հարաբերությունը 2003 թվականին կկազմի 3.2%, որը կգերազանցի 2002-ի փաստացի 2.5% մակարդակը: 2003 թվականի պետական բյուջեի դեֆլուցի ֆինանսավորմանը կուղղվեն 117.8 մլն ԱՄՆ դոլարի չափով ստանալիք վարկերը, որոնց հիմնական մասը կտրամադրվի Համաշխարհային Բանկի կողմից:


## Եկամուտներ

ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի Եկամուտների ընդհանուր գումարը ծրագրավորվել է 287 մլրդ դրամի չափով, որը գերազանցում է 2002 թվականի համար հաստատված մուտքերի մակարդակը 30.7%-ով: Հարկ է նշել, որ առաջին անգամ բյուջետային մուտքերի կազմում հաշվառվել են մի շարք ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհները (49.2 մլրդ դրամ) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց ակնկալվող վճարները (1.07 մլրդ դրամ): 2003 թվականին բյուջետային Եկամուտները կկազմեն տվյալ տարվա համար ծրագրավորվող ՀՆԱ - ի 19.48%-ը, ընդ որում առանց 2003 թվականից պետական բյուջեում հաշվառվող վերը նշված Եկամուտների այս ցուցանիշը կկազմի ՀՆԱ - ի 16.1%-ը: 2003 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերն ու տուրքերը՝ 76.8%, ոչ հարկային Եկամուտները կապահովվեն ընդհանուր բյուջետային մուտքերի 1.8%-ը, իսկ կապահովված գործառնություններից ստացվող Եկամուտներն ու տրանսֆերտները՝ համապատասխանաբար 0.2%-ը և 21.2%-ը:

**Ընթացիկ Եկամուտներ:** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեի ընթացիկ Եկամուտները (հարկային Եկամուտներ, պետական տուրքեր և ոչ հարկային Եկամուտներ) ծրագրավորվել են 225.6 մլրդ դրամի չափով, որը 2002 թվականի համար հաստատված մակարդակը գերազանցում է 23.4 մլրդ դրամով, կամ 11.6%-ով: Ընթացիկ Եկամուտների գերակշիռ մասը՝ 92%-ը կամ 207.6 մլրդ դրամը կազմում են հարկային Եկամուտները, մնացած 8%-ը կազմում են պետական տուրքերը՝ 5.7% և ոչ հարկային Եկամուտները՝ 2.3%:

### Դիագրամ 3-3

Ընթացիկ Եկամուտներ 225.6 մլրդ դրամ



**Հարկեր և պետական տուրք:** Հարկային եկամուտները և պետական տուրքերը ծրագրավորվել են 220.4 մլրդ դրամի կամ ընթացիկ տարվա հաստատված մուտքերի 113.2 %-ի չափով: Հարկային եկամուտների վրա էական ազդեցություն կունենան ՀՆԱ-ի կառուցվածքի ակնկալվող փոփոխությունները: Հիմնականուն հարկագատված գյուղատնտեսության ոլորտում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կմվագի մոտ 2%-ով, նպաստելով ՀՆԱ-ի հարկունակ մասի աճին: 2003 թվականի հարկային եկամուտների հավաքագրման վրա կանդրադառնա նաև ապրանքների ներմուծման ծավալների աճի տեմպի (6.1%, 2002 թվականին գրանցված 15.6%-ի դիմաց) նվազման միտումը: Այս գործոնների ազդեցությամբ անուղղակի հարկերի հարկման բազան կդրսենորի նվազման միտում: Հարկ է նշել, որ նշված 220.4 մլրդ դրամ գումարի կազմում 210.8 մլրդ դրամը ծրագրավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հավաքագրման նախորդ տարիների միտումների և համապատասխան մակրոցուցանիշների հիման վրա, իսկ մնացած 9.6 մլրդ դրամն ակնկալվում է ապահովել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման և հարկային օրենսդրությունում առաջարկվող փոփոխությունների ազդեցության հաշվին: Հաշվարկների ամփոփ պատկերը ներկայացված է Այսուսակ 3-1ում:

### Այլուսակ 3-1. Հարկեր և պետական տուրքեր

մլրդ դրամ


| Հարկատեսակը  | 2003 թ. ծրագրավորված մուտքերը |   |           |                                       |
|--|-------------------------------|---|-----------|---------------------------------------|
|  | ըստ հավ-աքագրման մի-տումների  | ըստ վարչարա-րական միջոց-առումների և օրենսդրական փոփոխություն-ների | Ընդա-մենը | %-ը Եկամու-տների ընդհա-նուր ծա-վալում |
| Հարկային Եկա-մուտներ և պե-տական տուրքեր, այդ թվում | 210.8                         | 9.6   | 220.4     | 100                                   |
| ԱԱՀ  | 100.1                         | 3.1   | 103.2     | 46.8                                  |
| Ակցիզային հարկ                                     | 38.8                          | 0.4   | 39.2      | 17.8                                  |
| Շահութահարկ  | 20.1                          | 1.7   | 21.8      | 9.9                                   |
| Եկամտահարկ   | 13.5                          | 1.2   | 14.7      | 6.7                                   |
| Մաքսատուրք   | 11.0                          | 0.8   | 11.8      | 5.4                                   |
| Հաստատագր-ված վճարներ                              | 6.6                           | 0.6   | 7.2       | 3.3                                   |
| Բնապահպանա-կան և բնօգտա-գործման վճար-ներ           | 4.0                           | 0.3   | 4.3       | 1.9                                   |
| Պարզեցված հարկ                                     | 3.9                           | 0.3   | 4.2       | 1.9                                   |
| Այլ հարկային Եկամուտներ                            | 1.0                           | 0.1   | 1.1       | 0.5                                   |
| Պետական տուրք                                      | 11.8                          | 1.0   | 12.8      | 5.8                                   |

**Պաշտոնական տրանսֆերտներ:** Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2003 թվականին ակնկալվում է ստանալ 60.9 մլրդ դրամի չափով պաշտոնական տրանսֆերտներ : Այդ միջոցները կօգտագործվեն տարերի ծրագրերի իրականացման համար : Ամենամեծ դրամաշնորհը կստացվի Լինսի հիմնադրամից՝ 46.65 մլրդ դրամ (79.55 մլն ԱՄՆ դոլար)՝ « Ճանապարհաշինություն », « Բնակարանաշինություն », « Մշակութային օջախների վերականգնում » և « Երևանի փողոցների վերանորոգում » ծրագրերի իրականացման համար: Մյուս դռնորներն են Եվրոհանձնաժողովը, Հոլանդիայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության կառավարությունները և Համաշխարհային Բանկը :

## Ծախսեր

Ինչպես արդեն նշվեց, 2003 թվականի պետական բյուջեի ծախսերը կկազմեն 334.2 մլրդ դրամ, որը գերազանցում է 2002 թվականի հաստատված ցուցանիշը 28.48%-ով : Ծախսերի ամբողջ ծավալի 67.7%-ը կամ 226.2 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 33.36%-ը կամ 111.5 մլրդ դրամը՝ կապահով ծախսերին, և (-1.05%)-ը կամ (-3.5) մլրդ դրամը՝ վարկավորում հանած մարում ծախսերին : Հարկ է նշել, որ 2003 թվականի պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված են 13.9 մլրդ դրամ մուտքեր բյուջետային վարկերի վերադարձից, վարկերի տրամադրում 10.4 մլրդ դրամ, լինսի հիմնադրամի և մի շարք այլ արտաքին դոնորների դրամաշնորհային միջոցներով իրականացվող ծախսերը և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց մուտքերի հաշվին ծախսերը : 2002 թվականին նման մուտքեր չկար կամ չէր արտացոլված պետական բյուջեում : 2003 թվականի համար հաստատված համադրելի ծախսերի աճը 2002 թվականի համար հաստատված մակարդակի հանդեպ կկազմի 36.1 մլրդ դրամ կամ 13.8% : Բյուջետային ծախսերը դասակարգվում են 14 խմբերի, ինչպես այն ցույց է տրված Դիագրամ 3-4 – ում:

**Դիագրամ 3-4. Պետական բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման հիմնական խմբերի**



- 01 Ընդհանուր բնույթի պետական ծառայություն
- 02 Պաշտպանություն
- 03 Հասարակական կարգի պահպանություն, ազգային անվտանգություն և դատական գործունեություն
- 04 Կրթություն և գիտություն
- 05 Առողջապահություն
- 06 Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն
- 07 Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն
- 08 Բնակարանային-կոմունալ տնտեսություն
- 09 Վառելիքային և էներգետիկ համալիր
- 10 Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն
- 11 Արդյունաբերություն, հանքային հանաժոններ (բացառությամբ վառելիքի), շինարարություն և բնապահպանություն
- 12 Տրանսպորտ, ձանապահային տնտեսություն և կապ
- 13 Տնտեսական այլ ծառայություններ
- 14 Հիմնական խմբին չդասվող ծախսեր

- Ուժային համակարգի ծախսերը (պաշտպանություն, ազգային անվտանգություն և այլն) կկազմեն 65.2 մլրդ դրամ, կամ բյուջեի 19.5%-ը:
- Ծախսերը սոցիալական ոլորտի ծրագրերի վրա, որոնք ներառում են առողջապահությունը, կրթությունը, մշակույթը և այլ բնագավառները կազմում են 101.8 մլրդ դրամ, կամ բյուջեի 30.4%-ը:
- Ծախսերը լայն սպեկտրի տնտեսական ծրագրերի վրա, որոնք ընդգրկում են տրանսպորտը, գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, էներգետիկ համակիրը և այլ բնագավառները կազմում են 97.9 մլրդ դրամ, կամ բյուջեի 29.28%-ը:
- Պետական պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարները), որոնք ներառված են 14 -երրորդ խմբում (հիմնական խմբին չդասվող ծախսեր) կազմում են 13.9 մլրդ դրամ, կամ բյուջեի 4.2%-ը:

**Հատկացումներ համայնքների բյուջեներին:** «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսքով տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հիմք ունենալով նախորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4%-ը : 2003 թվականին համայնքների բյուջեներին դոտացիաներ տրամադրելու նպատակով պետական բյուջեով նախատեսվում է շուրջ 9.152 մլրդ դրամ հատկացումներ (ՀՀ 2001 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների, այն է 228.8 մլրդ դրամի 4%-ի չափով), որը գերազանցում է 2002 թվականի բյուջեով նախատեսված համապատասխան ցուցանիշը 19.8%-ով:

Ավելի մոտիկից ծանոթանանք բյուջեի սոցիալական և տնտեսական բնագավառների մի քանի ծրագրերին:

**Կրթության բնագավառը** Հայաստանի Հանրապետությունում առավել կարևորվում և առաջնային համարվող բնագավառներից է, ուստի կրթական համակարգի պահպանումն ու զարգացումը, որպես միջազգային ասպարեզում երկրի մրցունակությունն ապահովելու գրավական, այսօր էլ պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում: 2003 թվականի պետական բյուջեով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը կազմում են 32.0 մլրդ դրամ: Ծախսերի աճը 2002 թվականի նկատմամբ կազմում է 19.6%, որը հիմնականում պայմանավորված է տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն ենթախմբի ծախսերի աճով՝ 4.5 մլրդ դրամով: Դպրոցներում 46800 մանկավարժական դրույքների միջին աշխատավարձը կրարձրացվի 20%-ով: Շարունակվելու են բարեփոխումները, որոնք նախատեսված են ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրով: Բարեփոխումները ուղղված են ուսումնական հաստատությունների կազմակերպարագական տեսակի հստակեցմանը, համակարգի կառավարման ձևի և ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը: 2003 թվականի վերջին հանրակրթական մոտ 980 դպրոցների ֆինանսավորումը կկատարվի նոր կարգով՝ ըստ աշակերտների թվի: Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի նախատեսվում է մինչև 2005 թվականը հանրակրթական բոլոր դպրոցների աստիճանական անցումը ըստ աշակերտների թվի ֆինանսավորման: Բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում պահպանվելու է

տնտեսության առանձին բնագավառների զարգացման, հիմնարար, կիրառական և հասարակական գիտությունների գծով մասնագետների պատրաստումը:

Պետության կողմից գիտության ֆինանսավորումն կիրականացվի բազային, նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ձևերով:

Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեով **առողջապահության ոլորտի** ծախսերի ծևավորումն ունեցել է երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

Առողջապահության ծախսերը 2003 թվականին նախատեսված են 20.8 մլրդ դրամի մակարդակով, որը գերազանցում է 2002 թվականի ծախսերը 29.8%-ով (պետական կառավարման ապարատի ծախսերը հաշվի չեն առնվում):

Հատկացները նախատեսվում է ուղղել՝

- հիվանդանոցային բուժօգնությանը՝ 11.6 մլրդ դրամ,
- առաջնային (ամբողատոր-պոլիկլինիկական) բուժօգնությանը՝ 7.0 մլրդ դրամ,
- հիգիենիկ և հակահամաձարակային ծառայությանը՝ 0.58 մլրդ դրամ,
- առողջապահության այլ ծառայություններին և ծրագրերին՝ 1.55 մլրդ դրամ:

Հիվանդանոցային օգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսի համար նախատեսվում է 7300 դրամ, որը 2002 թվականի համանման տվյալի դիմաց աճել է 21.7%-ով: Բժշկական անձնակազմի աշխատողների ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել հիվանդանոցներում՝ մինչև 30000 դրամ, պոլիկլինիկաներում՝ 27700 դրամ: Առաջնային խնդիր է համարվում առողջապահությանը վերաբերող օրենսդրական դաշտի բարելավումը, հանրապետության առողջապահության քաղաքականության մշակումը, 2003 թվականին “Առողջապահության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Երկարաժամկետ քաղաքականության առումով՝ 2003 թվականին շարունակական ներդրման մեջ կլինի ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար, փոխարինելու է ներկայիս համեմատաբար ուռածացված ամբողատոր-պոլիկլինիկական համակարգին: Ընտանեկան բժշկության համակարգի ծևավորմանը զուգընթաց ներկայիս խոշոր պոլիկլինիկաների մի մասը վերածվելու են հիվանդանոցային բուժիմնարկների հետ սերտորեն փոխկապակցված կոնսուլտացիոն-ախտորոշիչ տարածքային կենտրոնների:

**Սոցիալական ապահովության բնագավառի** համար << 2003 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերը նպատակառուղղված են բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը: Բնագավառի համար նախատեսված ծախսերի գերակշռող մասը կազմում են աղքատության ընտանեկան նպաստներին ուղղվող միջոցները: Դրանց վճարման համար նախատեսվում է 12.74 մլրդ դրամ: Պետք է նշել, որ աղքատության ընտանեկան նպաստի համակարգը, հանդիսանալով սոցիալական պաշտպանության մինչև այժմ գործող համակարգերից առավել հասցեագրվածը, դեռևս կատարելագործման կարիք ունի:

**Վարկային միջոցներով իրականացվելիք ծրագրեր:** 2003 Հայաստանի տնտեսության առանձին ճյուղերում և սոցիալական ոլորտում մի շարք ծրագրերի

իրականացման նպատակով միջազգային ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից նախատեսվում են ներգրավել վարկային միջոցներ : Իրականացվող 22 ծրագրերի համար ակնկալվող վարկային հատկացումների ընդհանուր գումարը կկազմի մոտ 45.6 մլրդ դրամ (77.8 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ կառավարության կողմից վարկային ծրագրերին ներդրվող գումարը կկազմի մոտ 3.5 մլրդ դրամ (6.0 մլն ԱՄՆ դոլար): Նշենք դրանցից մի քանիսը.

- **Համայնքային զարգացման ծրագրի** նպատակն է՝ Երևանի ջրանատակարարման համակարգի բարելավումը, ջրմուղ-կոյուղու ժառայությունների արդյունավետության և կառավարման կատարելագործումը, պետական բնակարանային շինարարության քաղաքականության բարեփոխումները:
- **Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագրի** նպատակն է՝ համայնքային մակարդակի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքի վերականգնման իրականացումը, համայնքային և տեղական կազմակերպություններին աջակցություն ցույց տալը զարգացնելու իրենց մասնագիտական և վարչական ունակությունները ծրագրեր պատրաստելու և իրականացնելու ասպարեզում, նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Շինարարական բնագավառում նախատեսվում կառուցել թվով 17 կրթական հիմնարկ Երևանում և տարբեր մարզերում, վերակառուցել 3 հիվանդանոց, 12 ջրագիծ և մի քանի այլ ծրագրեր:
- **Պատվարների անվտանգության ծրագրի** նպատակն է՝ ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնական ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը: Նախատեսվում է առավել վտանգ ներկայացնող 20 պատվարների վերականգնում և մնացած բոլոր 60 ջրամբարների ուսումնասիրում:
- **Տրամսայորտի ծրագրով** նախատեսվում է կատարել ճանապարհինարարական աշխատանքներ Վանաձոր-Ստեփանավան, Կապան-Բաջարան, Գյումրի-Բավրա և Սպիտակ -Գյումրի ուղղություններով, մի շարք կամուրջների վերականգնման աշխատանքներ, սարքավորումների պահեստամասերի ձեռքբերում, երկաթուղու գծահատվածների նորոգում:
- **Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի** նպատակն է ոռոգման համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնումն և վերակառուցումը, հանրապետության երեք առավել արդյունավետ ոռոգման համակարգերում մեխանիկական եղանակը ոռոգման ինքնահոս եղանակով փոխարինումը:
- **Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրով** նպատակ ունի աջակցելու մասնավոր ֆերմերային տնտեսությունների և ագրովերամշակող ձեռնարկությունների զարգացմանը:
- **Լինսի հիմնադրամի վարկավորման ծրագրի** նպատակն է Հայաստանի Հանրապետությունում աջակցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը՝ վարկերի տրամադրման միջոցով:

## 4. Բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը

Դեֆիցիտը (պակասուրդը) և հավելուրդը բյուջեի եկամուտների և ծախսերի փոխհարաբերության չափանիշներն են: Դեֆիցիտը այն մեծությունն է, որով ծախսերը գերազանցում են եկամուտներին, իսկ հավելուրդը ցույց է տալիս, թե ինչքանով են եկամուտները գերազանցում ծախսերին:

Այն միջոցները, որ կառավարությունը օգտագործում է իր ծախսերը կատարելու համար, այն է պետական բյուջեի եկամուտները, իիմնականում գոյանում են հարկերից: Անցած տասը տարիների ընթացքում կառավարության ստանձնած պարտավորությունները ավելին էին, քան եկամուտները, ինչը ստիպեց կառավարությանը ռեսուրսներ փոխառնել իր պարտավորությունները կատարելու համար և դրա արդյունքում գոյացավ պետական պարտքը: Եթե սեփական և փոխառված ռեսուրսները բավարար չեն լինի ծրագրավորված ծախսերը կատարելու համար, ապա կպահանջվի բյուջեի ծախսերի կրճատում:

Պետական պարտքը իրենից ներկայացնում է Կառավարության և Կենտրոնական Բանկի պարտավորությունների ընդհանուր գումարը, այդ թվում նաև պարտավորություններ, որոնք գոյանում են տրված երաշխիքներից, տարբեր օրենսդրական ակտերի կիրառումից և պայմանագրերից:

**Ներքին պետական պարտքի կառավարում:** 2002 թվականին պետական ռազմավարությամբ նախատեսվում էր շարունակել իրագործել հետևյալ ծրագիրը.

1. Աերքին պետական պարտքի էժանացում,
2. Աերքին պետական պարտքի ժամկետայնության երկարացում,
3. պետական պարտատոմսերի շուկայի նկատմամբ ներդրողների վստահության ամրապնդում ու շուկայի թափանցիկության ապահովում:

2002 թվականին «Պետական բյուջեի մասին» << օրենքով նախատեսվում էր ապահովել 3.5 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում, և կատարել 7.8 մլրդ դրամ սպասարկման ծախս: 2002 թվականի ընթացքում տեղաբաշխվել է 41.88 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որից հասույթը կազմել է 38.20 մլրդ դրամ: Ընդ որում, թողարկված պարտատոմսերի ժամկետայնությունը նվազագույնը եղել է 24 շաբաթ, առավելագույնը՝ 5 տարի: Նույն ժամանակահատվածում կատարվել է 34.26 մլրդ դրամի մարտում և 5.96 մլրդ դրամի սպասարկման ծախս: Տարեվերջին ներքին պետական պարտքի ծավալը կազմել է 40.8 մլրդ դրամ (ներառյալ << կենտրոնական բանկի կողմից << կառավարությանը բացված վարկային գծի դիմաց տրամադրված արժեթղթերի): Համեմատության համար նշենք, որ 2001 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքի ծավալը կազմել է 36.4 մլրդ դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2002 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 263 օր (2001 թվականի համար նույն ցուցանիշը եղել է 210 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 16.3% (2001 թվականի համար նույն ցուցանիշը եղել է 21.2%): 2003 թվականի բյուջեում նախատեսվում է 7.6 մլրդ դրամի սպասարկման ծախս ապահովելով 2.0 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2003 թվականի վերջին ներքին պետական պարտքի ծավալը կազմի 42.5 մլրդ դրամ:

**Արտաքին պետական պարտքի կառավարում:** Հայաստանի Հանրապետության (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները և տրամադրված արտաքին երաշխիքները) 2002 թվականի վերջին կազմել է 1025.2 մլն ԱՄՆ դոլար: 2002 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 115.7 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 89.3 մլն ԱՄՆ դոլար և ՀՀ կենտրոնական բանկի գծով 26.3 ԱՄՆ դոլար, և կատարվել է 47.9 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 21.2 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով): 2001 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը աճել է մոտ 120 մլն ԱՄՆ դոլարով: 2002 թվականի ընթացքում արտաքին պարտքի գծով ընդհանուր ապասարկումը կազմել է մոտ 68.1 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2002 թվականին այն կազմել է 38.2 մլն ԱՄՆ դոլար, որից 21.2 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 17 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար: ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունների գծով սպասարկումը կազմել է 19.8 մլն ԱՄՆ դոլար, որից 18.3 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 1.5 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2003 թվականի ընթացքում, արտաքին պետական պարտքի (ԱՊՊ) գծով նախատեսվում է ստանալ մոտ 169.8 մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 117.8 մլն ԱՄՆ դոլար: 2003 թվականի ընթացքում ԱՊՊ-ի գծով նախատեսվում է սպասարկել (ներառյալ երաշխիքների սպասարկումը) մոտ 171.5 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնական գումարի մարման գծով և մոտ 13 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով մոտ 133.3 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (որից 93.8 մլն ԱՄՆ դոլարը ռուսական վարկերի գծով ամբողջ պարտքի վաղաժամկետ մարումը գույքային ձևով) և 10.6 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2003 թվականի վերջին ՀՀ ԱՊՊ-ը կկազմի մոտ 1023.5 մլն ԱՄՆ դոլար: 2004 – 2005 թվականների ընթացքում նախատեսվում է ստանալ համապատասխանաբար 84.2 և 60.7 մլն ԱՄՆ դոլար՝ ամբողջությամբ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով, և միաժամանակ իրականացնել 46.9 և 46.3 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 15.8 և 13.3 մլն ԱՄՆ դոլար:

Հիմնվելով Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վրա ՀՀ արտաքին պարտքի գուտ ներկա արժեքը (ԶՆԱ) 2003 թվականի վերջին կկազմի 572.9 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ-ի 22.8%-ը և արտահանման 99.2%-ը: Այս ցուցանիշների գծով Հայաստանի Հանրապետությունը որակավորվում է որպես միջին պարտավորվածության երկիր: Հարկ է նշել, որ այս ցուցանիշները Հայաստանի Հանրապետության պայմաններում շարունակակես գտնվում են բավարար դիրքերում, ինչը պայմանավորված է արտաքին պետական պարտքի զամբյուղի արտոնյալության բարձր աստիճանով:


Վարկային պարտավորությունների միջին կշռված տոկոսադրույքը 2002 թվականին կազմել է 2.4% (օրինակ՝ կենտրոնական և արևելաեվրոպական երկրներում այն կազմում է մոտ 10%), և հիմնական պատճառն այն է, որ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների մոտ 78%-ն արտոնյալ պայմաններ ունեն: 2003-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի միջին կշռված տոկոսադրույքը չի գերազանցի 2.0%-ը:

2003 – 2004 թվականներին պարտքի սպասարկում/արտահանում ցուցանիշը կկազմի համապատասխանաբար 30.5% և 8.8%: Պարտքի սպասարկում/բյուջեի եկամուտներ ցուցանիշը 2002 – 2003 թվականներին կկազմի 18.6% և 44.13%: Այսպիսով, 2002 – 2004 թթ. պարտքի սպասարկման բոլոր ցուցանիշները գտնվում են նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշի սահմաններում:

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը ներկայացված է դիագրամ 4-1 – ում:

#### **Դիագրամ 4-1. << 2003 թ. պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը**

Ընդհանուր դեֆիցիտ 47.2 մլրդ դրամ



## 5. Ի՞նչ է բյուջետային գործընթացը

### ՀՀ պետական բյուջեի նախագիծը

Պետական բյուջեի նախագիծի մշակման գործընթացը սահմանվում է “ՀՀ բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 21 հոդվածով: Պետական բյուջեի նախագիծի մշակումը սկսվում է դրա Ազգային ժողով ներկայացնելուց ամիսներ առաջ: Բյուջետային գործընթացը պաշտոնապես սկսվում է ՀՀ վարչապետի որոշումից, ուր նշվում է պետական բյուջեի նախագիծի մշակման աշխատանքների կատարման ժամանակացույցը և մասնակիցների պատասխանատվությունը: Վարչապետի որոշումը սովորաբար կայացվում է տարեսկզբին: Բյուջեի նախագիծի մշակման, քննարկման և հաստատման հիմնական փուլերը ներկայացված են 5-1 աղյուսակում:

### Աղյուսակ 5-1. ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի նախագիծի մշակման, քննարկման և հաստատման հիմնական փուլերը

| Փուլեր   | Պատասխանատու   |
|--|--|
| Մշակել և պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմիններին տրամադրել 2003 թվականի բյուջեները կազմելու համար անհրաժեշտ հաշվարկների կատարման մեթոդական ցուցումները, բյուջետային ֆինանսավորման հայտերի, բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշվի ձևերը և ներկայացան կարգը   | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն   |
| Մշակել և պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմիններին տրամադրել պետական տուրքերի, ոչ հարկային եկամուտների և կապիտալի գործառնությունից եկամուտների գծով Հայաստանի Հանրապետության 2003-2005 թվականների պետական բյուջեների նախագծերում նախատեսման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն   |
| ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել 2003 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը  | Հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ   |
| ՀՀ 2003-2005 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակում   | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ սոցիալական ապահովության նախա- |

|  |  |
|--|--|
|  | րարություն, ՀՀ կառավարության առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե                     |
| ՀՀ 2003 թվականի պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հայտ ներկայացրած հայտատուների հետ համաձայնեցնել իրենց գծով բյուջեի նախագծում նախատեսվելիք ծախսերի ֆինանսավորման չափերը | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ |
| Մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003 թվականի բյուջետային ուղերձի, ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծերը                            | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն   |
| ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական խնբագրում  | ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հիմնական ծախսող միավորներ                      |
| 2003 թվականի պետական բյուջեի նախագիծը ներկայացվում է Ազգային ժողով   | Կառավարություն   |
| Պետական բյուջեի նախագծի քննարկում Ազգային ժողովում (մշտական հանձնաժողովներում և լիազումար նիստում)   | Կառավարություն, Ազգային ժողով  |
| 2003 թվականի պետական բյուջեի նախագծի բովանդակությունը խնբագրվում է հաշվի առնելով Ազգային ժողովում քննարկումների ժամանակ արտահայտված դիտողությունները                           | Կառավարություն, ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հիմնական ծախսող միավորներ      |
| ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը  | Ազգային ժողով  |

Սահմանադրության 76-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը Կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Եթե մինչև բյուջետային տարվա սկիզբը բյուջեն չհաստատվեր, ապա այդ դեպքում ծախսերը կվատարվեին նախորդ տարվա համամասնություններով՝ մինչև բյուջեի հաստատումը:

Առաջիկա ֆինանսական տարվա բյուջեի մշակման հետ մեկտեղ կատարվում է ընթացիկ տարվա բյուջեի կատարման մոնիթորինգը: Բյուջեի կատարման գնահատումը և վերլուծությունը կարևոր են հաջորդ տարվա բյուջեի մշակման համար, քանի որ բացահայտվում են ընթացիկ տարվա միտումները եկամուտների և ծախսերի բնագավառում: Այսիսով, բյուջեն հաստատելուց հետո ֆինանսական տարվա ընթացքում պատրաստվում են բյուջեի կատարման ամսական, եռամսյակային, կիսամյա և տարեկան հաշվետվությունները:

## **Պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը Ազգային ժողովի կողմից**

Պետական բյուջեի նախագծի քննարկումը Ազգային ժողովում իրականացվում է “Աժ կանոնակարգ” օրենքով սահմանված կարգով, ըստ որի կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարրին սկսվելուց առնվազն 60 օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը:

Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին իրենց առաջարկությունները պատգամավորները, պատգամավորական խմբերը և մշտական հանձնաժողովներն ներկայացնում են կառավարություն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով: Կառավարությունը խմբագրված բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում կցելով ըստ հոդվածների հաջորդականության խմբագրված առաջարկությունների ամփոփաթերթիկը:

Բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումն Ազգային ժողովի լիազումար նիստում սկսվում է ոչ ուշ, քան բյուջետային տարվան նախորդող դեկտեմբեր ամսվա առաջին երօրյա նիստում: Նախագծի ներկայացման համար կառավարությունը կարող է հանդես գալ երեք գեկուցմամբ՝ մինչև 90 րոպե ընդհանուր տևողությամբ: Զեկուցողները ներկայացնում են նաև նախնական քննարկումների արդյունքով նախագծում կատարված փոփոխությունները:

Մինչև 30-ական րոպե տևողությամբ հարակից գեկուցումներով հանդես են գալիս՝  
ա) Կենտրոնական բանկի նախագահը՝ ներկայացնելով դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները.

բ) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը:

գ) պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի օրինականության և հիմնավորվածության մասին հանձնաժողովի եզրակացությունը.

դ) ըստ ցանկության՝ մյուս մշտական հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

Մտքերի փոխանակման ժամանակ ամբիոնը կարող է տրամադրվել խմբակցությունների և պատգամավորական խմբերի ներկայացուցիչներին, վարչապետի ներկայացմամբ կառավարության անդամներին, Երևանի քաղաքապետին և մարզպետներին: Մտքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի դեկավարի եզրափակիչ ելույթով: Մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո հայտարարվում է բյուջեի նախագծի քննարկումը ընդմիջելուց հետո պատգամավորները իրենց առաջարկությունները պաշտոնապես, Աժ աշխատակազմի միջոցով, 24 ժամվա ընթացքում ներկայացնում են կառավարություն:

Բյուջեի օրենքի նախագծի քննարկումը վերսկսելուց առնվազն 24 ժամ առաջ կառավարությունը նախագծի վերջնական տարբերակը սահմանված կարգով

կազմված ամփոփաթերթիկով ներկայացնում է Ազգային ժողով: Բյուջեի մասին օրենքի նախագծի վերսկսված քննարկումը ավարտվում է վարչապետի կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի դեկավարի ելույթով: Եթե բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տարբերակն ընդունելու մասին կառավարության առաջարկը քվեարկության արդյունքում չի ստանում անհրաժեշտ թվով ձայներ, ապա կառավարությունը կարող է բյուջեի հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը: Եթե կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում կամ նման որոշում չի ընդունվում, ապա բյուջեն, կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

## Բյուջեի կատարման վերահսկումը

Կառավարությունը պատասխանատվություն է կրում պետական բյուջեի կատարման համար, տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են համայնքների բյուջեների կատարման համար: << Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը մշակում է ֆինանսական կառավարման ընդհանուր ուղղությունները, որոնք ընդգրկում են նաև բյուջեի կատարման գործընթացը: Հայաստանում բյուջեի կատարման կազմակերպման պատասխանատվությունը կրում է պետական գանձապետարանը, որը մասն է կազմում << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության: Գանձապետարանը իրականացնում է գործառնությունները պետական գումարների հետ, կատարում է ծախսող միավորների համար կանխիկ ռեսուրսների հետ կապված սպասարկումը, պահպանում է հաշվապահական հաշվառման գրանցումները և նախապատրաստում է բյուջեի կատարման մասին հաշվետվությունները: Գանձապետարանը ստանում է պետական ռեսուրսները, հիմնական ծախսող միավորներին իրազեկ է պահում ռեսուրսների առկայության մասին և կատարում է վճարումները ըստ հաստատված բյուջեի հատկացումների:

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողովում քննարկվում և հաստատվում է Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին: Տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման գործընթացը նման է բյուջեի հաստատման գործընթացին: Եթե բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը չի ընդունվում, ապա կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե կառավարությանն անվստահության որոշում չի ընդունվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված:

# Մասնագիտական տերմիններ

## Բյուջե

Ֆինանսական տարվա ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծևավորման և ծախսման ծրագիր:

## Բյուջեի դեֆիցիտ

Բյուջեի ծախսերի գերազանցումը բյուջեի եկամուտների նկատմամբ:

## Բյուջեի հավելուրդ

Բյուջեի եկամուտների գերազանցումը բյուջեի ծախսերին

## Բյուջետային գործընթաց

Բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման, հաստատված բյուջեի կատարման և վերջինիս վերաբերյալ հաշվետվության կազմման, քննարկման ու հաստատման օրենքներով սահմանված գործընթաց:

## Բյուջետային դասակարգում

Բյուջեի նույտքերի և ելքերի համակարգված խմբավորումը հիմնված այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսին են, օրինակ, ծախսերի տնտեսագիտական բնույթը, գործառական առանձնահատկությունները, գերատեսչական կառուցվածքը և այլ բնութագրերը:

## Բյուջետային եկամուտներ

Բոլոր հարկային, ոչ հարկային և այլ եկամուտներ, որոնք հավաքագրվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Բյուջետային եկամուտները ներառում են նաև պաշտոնական և այլ տրանսֆերտները (նվիրատվությունները):

## Բյուջետային ծախսեր

Բյուջետային ռեսուրսների հատկացումները ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:

## Բյուջետային ֆինանսավորման հայտ

Ծախսող միավորների կողմից պատրաստվող փաստաթուղթ, որը պարունակում է առաջարկություններ և համապատասխան հիմնավորումներ առաջիկա տարում տվյալ միավորի գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ բյուջետային ռեսուրսների վերաբերյալ:

## Բյուջետային հատկացումներ

Բյուջեի մասին օրենքով՝ ծախսող միավորներին տրված լիազորությունները բյուջետային միջոցների հաշվին տվյալ բյուջետային տարում որոշակի չափով ծախսեր կատարելու համար:

## Բյուջետային տարի

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին համընկնում է օրացուցային տարվա հետ: Այն սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

## **Զուտ ներկա արժեք**

Հարունակելի ծախսերի զուտ ներկա արժեքը՝ գումարն է այդ ծախսերի ընթացիկ և զեղչված ապագա արժեքի: Ապագա արժեքը զեղչվում է հաշվի առնելով այն հանգամանքը, որ փողի ներկայիս գինը ավելին է, քան նույնը ապագայում, քանի որ ժամանակի ընթացքում նույն փողը կատեղծի որոշակի տոկոսային գումարներ:

## **Համախառն ներքին արդյունք (ՀՍԱ)**

ՀՍԱ-ն երկրի տնտեսության ստանդարտ չափանիշ է: Այն ապրանքների և ծառայությունների գումարն է, որը ստեղծված է երկրում որոշակի ժամանակամիջոցում (սովորաբար մեկ տարի):

## **Համախմբված բյուջե**

Համախմբված բյուջեն ներառում է պետական բյուջեն, պետական սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն և համայնքների բյուջեները:

## **Ծախսող միավորներ**

Միավորներ, որոնք համաձայն բյուջետային օրենսդրության իրավունք են ստանում բյուջետային ռեսուլսներ ծախսելու:

## **Պետական պարտք**

Կառավարության և կենտրոնական բանկի ընդհանուր պարտավորությունները, ներառյալ պարտավորությունները գոյացող երաշխիքներից, օրենսդրությունից և համաձայնագրերից: